
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թուրքմենստանի գազի պաշարների համար պայքարը թեժանում է	4
Դիտարկում «Russian Energy Policy and its Challenge to Western Policy Makers» զեկույցի վերաբերյալ	6
Черноморские проекты: требуется равный подход к взаимовыгодному сотрудничеству	10
Էներգետիկ զագաթաժողով Կիևում	13
Աձուխ. համաշխարհային ռեսուրսները և դրանց սպառումը	16
Новости ТЭК Южного Кавказа и Каспия (20 мая – 16 июня)	21

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԳԱԶԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ԹԵԺԱՆՈՒՄ Է

Սույն թվականի մայիսի 27-ին Թուրքմենստանի նախագահ Գ.Բերդիմուհամեդովը և ԵՄ Էներգետիկ հարցերով հանձնակատար Ա.Պիրալզար Ազգաբաղում ստորագրեցին ԵՄ և Թուրքմենստանի միջև Էներգետիկ համագործակցության հռչակագիրը: Այն երկու կողմերի համագործակցության հետագա զարգացմանն անհրաժեշտ իրավական հիմք կհանդիսանա: Սակայն ԵՄ-ի հետ ստորագրած հռչակագիրը Թուրքմենստանի ղեկավարության վերջին ամիսներին իրականացրած Էներգետիկ ղիվանագիտության ընդամենը մեկ արդյունքն է:

Այսօր, թերևս, դժվար է գտնել մի պետություն, որը Թուրքմենստանի նման ակտիվորեն ընդգրկված է միանգամից մի քանի Էներգետիկ նախագծերի իրականացման մեջ: Անցած տարի Մերձկասպյան գազատարի կառուցման մասին ռուս-թուրքմենա-ղազախական պայմանավորվածությունները, թերևս, պետք է փակելին Թուրքմենստանի գազի արտահանման աշխարհագրության և ուղղության թեման, քանի որ նոր գազատարը հնարավորություն կտար Ազգաբաղին նշանակալից ծավալներով գազ արտահանել ԵՄ՝ օգտագործելով Ռուսաստանի տարածքը: Սակայն վերջին ամիսներին Ազգաբաղի ակտիվ Էներգետիկ ղիվանագիտության արդյունքում ստորագրվեցին մի քանի այլընտրանքային փաստաթղթեր, որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ տարածաշրջանային Էներգետիկ և քաղաքական գործընթացների վրա:

Տրանսաֆղանական գազատար

2008թ. ապրիլի 25-ին Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադում Թուրքմենստանի, Պակիստանի, Աֆղանստանի և Հնդկաստանի ներկայացուցիչները պայմանագիր ստորագրեցին Տրանսաֆղանական գազատարի կառուցման մասին: Ստորագրված համաձայնագրով Թուրքմենստանից Աֆղանստան և ապա Պակիստան ու Հնդկաստան ձգվող գազատարի կառուցումը պետք է սկսվի 2010թ., իսկ 2015 թվականին դրանով արդեն իսկ պետք է սկսվի թուրքմենական գազի արտահանումը Հարավային Ասիա: Գազատարի կառուցման նախագծի ընդհանուր արժեքն է 7.6 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ գազատարի ընդհանուր հզորությունը կկազմի օրական մինչև 350 մլն մ³:

Ռուսական լրատվամիջոցներում սակավ մեկնաբանություններ ստացած այս համաձայնագիրը բավական կարևոր գործոն է թե՛ տարածաշրջանում ռուսական ազդեցության հետագա նվազման, թե՛ ամերիկյան դիրքերի մասնակի ամրապնդման տեսանկյունից: Տրանսաֆղանական գազատարը, որի կառուցման ֆինանսավորմանը պետք է մասնակցի Համաշխարհային բանկը, ամերիկյան նախագիծ է, որը լիարժեք մշակված տեսքով հանրությանն է ներկայացվել 2002թ.՝ ԱՄՆ և դաշնակիցների ռազմուժի կողմից Աֆղանստանի օկուպացիայից հետո: Նախագիծն ունի բավական լուրջ տնտեսական հիմնավորում՝ կապված Պակիստանում և Հնդկաստանում բնական գազի աճող պահանջարկն ապահովելու հետ: Սակայն նախագիծը, մինևույն ժամանակ, ավելի քան քաղաքականացված է՝ հաշվի առնելով, որ.

- այն պարզապես հակաիրանական մշակում է և ուղղված է Իրան-Պակիստան-Հնդկաստան գազատարի կառուցման նախագծի խափանմանը: Վաշինգտոնի անհանգստությունն իրանական գազը Հարավային Ասիա արտահանելու հարցի շուրջ արտահայտվել է բազմիցս: Իսկ 2004-ին հայտնի ամերիկյան վերլուծաբան Ջ.Պերկովիչի դրական կարծիքը նախագծի վերաբերյալ (որը ներկայացվել էր որպես տարածաշրջանում համագործակցության միջոցով խաղաղության հաստատման հնարավորության մեծացմանն օժանդակող նախագիծ) աննախադեպ հակահարված ստացավ ԱՄՆ վերլուծաբանական շրջանակների կողմից: Տրանսաֆղանական գազատարի կառուցման համաձայնագրի ստորագրումը, փաստորեն, լուրջ հարված է հասցնում Իրանի դիրքերին և էլ ավելի բարդացնում դեպի Հարավային Ասիա իրանական գազատարի կառուցման նախագծի իրականացումը:

- Տրանսաֆդանական գազատարն ուղղակիորեն հարվածում է նաև Ռուսաստանի շահերին, քանի որ Աշգաբադը հնարավորություն է ստանում իր գազի պաշարներն արտահանել ոչ ռուսական տարածքով: Հնդկաստանում տարեկան 5-6 տոկոսով աճում է գազի սպառումը, ինչը երկիրը դարձնում է այս առումով բավական կարևոր շուկա. նրա պահանջարկի մասնակի բավարարումը կարող է Թուրքմենստանի երկարաժամկետ էներգետիկ քաղաքականության կարևոր մաս կազմել:

Թուրքմենստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության մասին

2008թ. մայիսի 19-ին կայացավ Թուրքմենստանի նախագահ Գ.Բերդիմուհամեդովի պաշտոնական այցը Բաքու, ինչն արժանացավ արևմտյան մամուլի մեծ ուշադրությանը: Այցի լուսաբանումը և թուրքմենա-ադրբեջանական բանակցությունները ներկայացվում էին Թուրքմենստանի՝ Տրանսկասպյան գազատարի նախագծին միանալու տեսանկյունից: Հարկ է նշել, որ Ադրբեջանը բավական լավ էր պատրաստվել Թուրքմենստանի առաջնորդի այցելությանը: Այցելությունից առաջ Բաքուն մարեց Աշգաբադին ունեցած 44.8 միլիոն ԱՄՆ դոլարի պարտքը, որը գոյացել էր 1990-ականներին թուրքմենական գազն Ադրբեջան ներկրելու արդյունքում:

Թեև թուրքմենա-ադրբեջանական բանակցությունները չհանգեցրին Տրանսկասպյան գազատարի կառուցման համաձայնագրի ստորագրմանը, սակայն Գ.Բերդիմուհամեդովը հայտարարեց, որ Թուրքմենստանը շահագրգռված է գազատարի կառուցմամբ: Սա հետագա բանակցությունների դրական արդյունքի բավական լուրջ հիմքեր է տալիս: Կենտրոնական Ասիայում ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Ս.Մանը, որն այնպիսի կարևոր նախագծերի մշակման և իրականացման առաջին դեմքերից մեկն է, ինչպիսին են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, բանակցությունները բավական դրական գնահատեց և հայտարարեց, որ թուրքմենա-ադրբեջանական էներգետիկ երկխոսության զարգացման լավ հիմք է ստեղծվել:

Մեր կարծիքով, արդեն իսկ կարևոր առիթ կա ենթադրելու, որ առաջիկա մի քանի ամիսների ընթացքում կարող է ստորագրվել համաձայնագիր Տրանսկասպյան գազատարի կառուցման մասին: Իսկ սա նշանակում է, որ Հարավային Կովկասում իրականացվող էներգետիկ նախագծերը կստանան նոր լիցք և նոր որակ, քանի որ դրանց կմիանա Թուրքմենստանը՝ բնական գազի պատկառելի պաշարներով:

Թուրքմենստան-ԵՄ

Եվ վերջապես, հողվածի սկզբում նշված ԵՄ-Թուրքմենստան էներգետիկ համագործակցության հոչակագրի մասին: Անկասկած, ԵՄ-ի հետ համագործակցության զարգացումը Թուրքմենստանի համար հնարավոր է միայն Ռուսաստանի տարանցման մենաշնորհային դիրքերի թուլացման շնորհիվ: Ռուսաստանը, որը չի վավերացրել Եվրոպական էներգետիկ խարտիան և նրան կից Տարանցման արձանագրությունը, իր սեփական գազատար ցանցը չի տրամադրի որևէ երկրի կամ կազմակերպության՝ գազի անկախ արտահանում իրականացնելու համար: Ռուսաստանը Կենտրոնական Ասիայի գազ արտահանողների համար դարձել է մենաշնորհային վերավաճառող, և խոսել Թուրքմենստան-ԵՄ համագործակցության մասին ներկա իրավիճակի պահպանման պարագայում՝ դժվար է, եթե ոչ անհնար: Այս պարագայում հենց Տրանսկասպյան գազատարն է, որ լուրջ այլընտրանք կարող է դառնալ Ռուսաստանի տարածքով գազի արտահանմանը, իսկ սա խոսում է այն մասին, որ Տրանսկասպյան գազատարի կառուցման հնարավորությունները բավական մեծ են:

Միևնույն ժամանակ, արդեն իսկ գոյություն ունեցող նախագծերը, որոնցում ընդգրկված է Թուրքմենստանը, թվով և պարտավորություններով բավական շատ են, և դժվար է պատկերացնել, որ Թուրքմենստանը կարող է միաժամանակ մեծ քանակությամբ գազ արտահանել Ռուսաստան, Չինաստան, Աֆղանստան, Պակիստան, Հնդկաստան, ԵՄ: Սա նշանակում է, որ ստորագրված համաձայնագրերի մի մասը պարզապես չի աշխատելու: Թե որոնք կլինեն դրանք, ցույց կտա ժամանակը:

«Նորավանք» հիմնադրամ

ՌԻՏԱՐԿՈՒՄ «RUSSIAN ENERGY POLICY AND ITS CHALLENGE TO WESTERN POLICY MAKERS» ԶԵԿՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուսական էներգետիկ քաղաքականությունը դառնում է միջազգային հարաբերությունների կարևորագույն գործոններից մեկը: Այն, որ նավթի ու բնական գազի գների շարունակվող աճի պայմաններում առաջիկայում էներգետիկ բաղկացուցիչը միայն մեծացնելու է իր նշանակությունը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ, հարցի հանրահայտ կողմն է: Սակայն նորությունն այն է, որ հարցն աստիճանաբար գերիշխող դիրք է գրավում Մոսկվայի հետ ԱՄՆ ու եվրոպական ազդեցիկ երկրների հարաբերությունների օրակարգում: Թերևս, սխալված չլինենք, եթե նշենք, որ գալիք տարիներին ո՛չ հետխորհրդային երկրներում աշխարհաքաղաքական մրցակցության և ո՛չ էլ Արևելյան Եվրոպայում ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության համակարգի տարրերի տեղակայման հարցերը նման ներգործություն չեն ունենա Ռուսաստան-Եվրոպա-ԱՄՆ եռանկյունում, որքան ռուսական էներգետիկ քաղաքականության արդյունքները և դրանց միտված ԱՄՆ ու նրա դաշնակիցների հակաքայլերը: Այլ կերպ ասած՝ այսօր ավելի տեղին է ռուս-ամերիկյան կամ ռուս-եվրոպական հարաբերություններին առնչվող ռազմավարական նորությունները սպասել հենց այս ոլորտից, քան, օրինակ, ՆԱՏՕ-ին Ուկրաինայի ու Վրաստանի ենթադրվող անդամակցության շուրջ ծավալվող զարգացումներից:

Մեր նախորդ դիտարկման մեջ ներկայացրել էինք վաշինգտոնյան «The Nixon Center»-ի հրապարակած «Ռուսական էներգիան և եվրոպական անվտանգությունը. անդրատլանտյան երկխոսություն» («*Russian Energy and European Security: A Transatlantic Dialogue*») զեկույցը: Այս անգամ անդրադառնանք ԱՄՆ մայրաքաղաքում գործող ավելի ազդեցիկ՝ «Center for Strategic and International Studies»-ի («CSIS») պատրաստած զեկույցին՝ «Ռուսական էներգետիկ քաղաքականությունը և նրա ներկայացրած մարտահրավերը արևմտյան քաղաքականություն կերտողների նկատմամբ» («*Russian Energy Policy and its Challenge to Western Policy Makers*»):

Դիտարկում

Զեկույցը որպես *խնդիր* է առանձնացնում հիմնականում հետևյալ կետերը:

Առաջին՝ 2006թ. հունվարին Ուկրաինա և Վրաստան ռուսական բնական գազի մատակարարման դադարեցումը, նույն թվականին Լիտվա ու Բելառուս ռուսական նավթի մատակարարման դադարեցումը, 2007թ. հունվարին Վրաստանի նկատմամբ դարձյալ նույն սցենարի խաղարկումը ռուսական էներգետիկ քաղաքականության միայն ակտիվացման ցուցիչներն են, քանի որ այդ քաղաքականությունը գոյություն ունի ԽՍՀՄ փլուզումից ի վեր (ըստ զեկույցի՝ նախորդ 17 տարիների ընթացքում Ռուսաստանը քաղաքական նպատակներով դիմել է էներգետիկ նմանատիպ ճնշման ավելի քան 40 անգամ): Այսինքն՝ զեկույցը խնդիր է տեսնում ոչ այնքան ռուսական էներգետիկ քաղաքականության ակտիվացման, որքան նրա արդյունավետության մեծացման մեջ:

Երկրորդ. ըստ զեկույցի՝ ԱՄՆ-ն ու ԵՄ-ը երկար ժամանակ լուրջ ուշադրություն չեն դարձրել ռուսական էներգետիկ քաղաքականությանը, որից հետո արևմտյան անդրադարձը եղել է բավական թույլ ու չհամակարգված: Վերջինս պատճառ է հանդիսացել, որ Մոսկվայում զան այն համոզման, թե Արևմուտքն առնվազն ներկայում ի վիճակի չէ լրջորեն արձագանքել ռուսական էներգետիկ քաղաքականությանը: Այսինքն՝ զեկույցը որպես խնդիր է ներկայաց-

¹ Զեկույցի հեղինակն է Քեյթ Սմիթը (Keith C. Smith):

նում ոչ այնքան ԵՄ էներգետիկ միասնական ռազմավարության բացակայությունը, որքան այն փաստը, որ նաև այդ պատճառով Արևմուտքը մինչ օրս չի կարողանում հակազդել Ռուսաստանի էներգետիկ քաղաքականությանը, հետևաբար՝ այդ ուղղությամբ Մոսկվայի ձեռքբերումները շարունակվելու են:

Երրորդ. զեկույցը հատկապես առանձնացնում է Ֆրանսիայի, Իտալիայի ու Գերմանիայի դերակատարությունը Եվրոպայում ռուսական էներգետիկ քաղաքականության իրականացման գործում: Թեև ուղղակի նշված չէ, սակայն ակնարկվում է, որ էներգետիկ ոլորտում հենց այդ երկրների հետ Ռուսաստանի պայմանավորվածություններն էլ քաղաքական ու, ըստ ամենայնի, ռազմավարական առումով ապահովում են Մոսկվայի ձեռքբերումները Եվրոպայում: Այդ համատեքստում առանձնահատուկ տեղ է տրվում ռուս-գերմանական հարաբերություններին²: Այլ կերպ ասած՝ Մոսկվայի համար Եվրոպայում ռուսական էներգետիկ քաղաքականության ստեղծած հնարավորությունները զեկույցը բարձրացնում է ռազմավարական մակարդակի: Սառը պատերազմի ավարտից հետո առաջին անգամ Ռուսաստանը կարողացավ Եվրոպայի առջև հանդես գալ այնպիսի առաջարկությամբ (էներգետիկ քաղաքականություն), որը ռազմավարական մանևրների հնարավորություն է տալիս Մոսկվային: Մեր կողմից ավելացնենք, որ էներգետիկ քաղաքականությունը Ռուսաստանին Եվրոպայում գործելու համար գրեթե տվեց այն հնարավորությունը, ինչը ժամանակին ստացավ Խորհրդային Միությունը՝ փորձարկելով միջուկային զենքը: Սա, բնականաբար, լուրջ խնդիր է դիտվում Վաշինգտոնում:

Չորրորդ. զեկույցում նշվում է, որ Ռուսաստանի վարչապետ Պուտինն արդյունավետ կերպով կարողանում է օգտագործել «անձնական դիվանագիտությունը»՝ առանձին վերցված եվրոպական երկրներում (և կրկին նշվում են Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան) էներգետիկ լուրջ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար: Այդ հանգամանքն էապես խոչընդոտում է ԵՄ միասնական էներգետիկ քաղաքականության ձևավորմանը: Մինևույն ժամանակ, ներկայացվում են ևս երկու կետեր՝

- հատկապես Կենտրոնական Եվրոպայում³ կոռուպցիայի աճի և էներգետիկ բարձր գների պայմաններում Կրեմլն անհրաժեշտ միջոցներ է հատկացնում՝ քաղաքական ուժերին և էներգետիկ ոլորտում առանցքային դերակատարներին աջակցելու միջոցով ներազդելու Եվրոպայում քաղաքական ու տնտեսական որոշումների կայացման վրա,
- իր էներգետիկ քաղաքականության ենթակառուցվածքային մասն ուժեղացնելու նպատակով Մոսկվան ձեռնամուխ է եղել խորհրդային հետախուզության և նախկին սոցձամբարի երկրների անվտանգության կառույցների պաշտոնաթող աշխատակիցների

² Ըստ արևմտյան փորձագիտական գնահատականների՝ ներկայում ռուսական բնական գազի չափաբաժինը Գերմանիայի ներմուծման մեջ կազմում է 43-44% («Nord Stream»-ի գործարկումից հետո այն կհասնի մոտ 60%-ի), Իտալիայի պարագայում՝ 32% (հատկանշական է, որ ռուս-եվրոպական գազային մյուս խոշոր նախագիծը՝ «South Stream», «Газпром»-ը իրականացնում է իտալական «ENI»-ի հետ), Ֆրանսիայի՝ 24%: Ֆրանսիայի պարագայում այդ թիվն առաջիկա տարիներին, ըստ ամենայնի, կմեծանա, քանի որ գազային համագործակցության ոլորտում կողմերը հանգել են ռազմավարական պայմանավորվածությունների: Այդ է վկայում Բարենցի ծովում գտնվող ռուսական «Շտոկման» գազահանքի (բնական գազի պաշարներն այնտեղ գնահատվում են մոտ 3.66 տրլն մ³) շահագործման վերաբերյալ 2007թ. հուլիսի 13-ին «Газпром»-ի և ֆրանսիական «Total»-ի միջև կնքված պայմանագիրը («Շտոկմանի» շահագործման համար ստեղծվել է «Shtokman Development AG» ընկերությունը, որի բաժնետոմսերի 51%-ը պատկանում է «Газпром»-ին, 25%-ը՝ «Total»-ին, իսկ 24%-ը՝ նորվեգական «StatoilHydro»-ին), ինչպես նաև մայիսի 29-30-ը տեղի ունեցած Ռուսաստանի վարչապետ Պուտինի այցը Փարիզ ու նրա բանակցությունները Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի հետ, որից հետո՝ հունիսի 10-ին, «Газпром»-ի վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերը ֆրանսիական «Le Figaro» պարբերականին տված հարցազրույցում հայտարարեց, թե ընկերությունը մտադիր է կարևոր դեր խաղալ Ֆրանսիայի էներգետիկ շուկայում:

³ Ուշագրավ է այն հանգամանքը, որ զեկույցը կոռուպցիայի աճի մասին խոսում է Կենտրոնական Եվրոպայի պարագայում՝ շրջանցելով, օրինակ, Արևելյան Եվրոպան:

«տեղակայմանը» հատկապես Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայում որոշումների կայացման տեսանկյունից հանգուցային կետերում:

Այլ կերպ ասած՝ զեկույցը ներկայացնում է, որ օգտագործելով էներգետիկ քաղաքականության հնարավորությունները՝ Մոսկվան եվրոպական երկրներում ստեղծում է որոշում կայացնողների ռուսամետ շերտ: Սա նույնպես լուրջ խնդիր է դիտվում Վաշինգտոնում:

Ղինամիկայի առումով զեկույցը բաց է թողնում հիմնական հարցը, թե ինչքանով կհաջողվի ԵՄ-ին, այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ին ու նրա դաշնակիցներին, ձևավորել միասնական էներգետիկ քաղաքականություն՝ հակադրելու Ռուսաստանի էներգետիկ քաղաքականությամբ: Սակայն հեղինակը հարկ է համարում հատուկ կանգ առնել երկու կետերի վրա.

- Թեև առաջիկա տարիներին գազի ոլորտում ԵՄ պահանջները միայն աճելու են, սակայն կասկած է հայտնվում, որ Ռուսաստանը կկարողանա գալիք տարիներին բավարարել Եվրոպայի գազի պահանջները: Ձեկույցի ներկայացմամբ, վերջին 3-4 տարիներին Ռուսաստանի նավթի ու գազի արտահանման ծավալները չեն աճում, և բնական գազի ոլորտում Եվրոպայի առջև ստանձնած պարտավորություններն ի կատար ածելու համար Մոսկվան արդեն իսկ լրջորեն կախված է Թուրքմենստանից, Ղազախստանից և Ուզբեկստանից: «Առաջիկա 7-10 տարիների ընթացքում ռուսական կախվածությունը Կենտրոնական Ասիայից կաճի, մինչև «Յամալ», «Շտոկման» գազահանքերից և Սախալինից չսկսվի գազի մեծ հոսքը»,- ասված է զեկույցում:
- Որպես երկրորդ կարևոր դինամիկա ներկայացվում է «Газпром»-ի առաջիկա ընդլայնումը Կենտրոնական Եվրոպայում: Ձեկույցում նշվում է, որ «Газпром»-ին հաջողվեց գերմանական «Ruhrgas»-ի օգնությամբ վերահսկողություն սահմանել մերձբալթյան երեք հանրապետությունների գազային ենթակառուցվածքների ու գազամուղների նկատմամբ՝ «Ruhrgas»-ի հետ միասին տեղի շուկայում գրավելով մենաշնորհային դիրք: Դինամիկայի առումով զեկույցը պնդում է, որ 2011-2012թթ. նույնը պետք է սպասել Կենտրոնական Եվրոպայի պարագայում: Որպես հավելում նշվում է, որ վերջերս «Газпром»-ը նոր պայմանագրեր է կնքել Ավստրիայի, Հունգարիայի, Սլովակիայի, Բուլղարիայի, Հունաստանի ու Իտալիայի հետ:

Ձեկույցի հիմնական *եզրակացությունը* կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի՝

- առաջինն այն է, որ Ռուսաստանն իր էներգետիկ քաղաքականության շնորհիվ արդեն իսկ ռազմավարական կարգի պայմանավորվածությունների է անցել եվրոպական *մի շարք* ազդեցիկ պետությունների հետ, ու թեև այդ իմաստով առայժմ առանձնացվում են գերազանցապես ռուս-գերմանական հարաբերությունները, սակայն զեկույցը, փաստորեն, նույն հեռանկարն է տեսնում նաև Իտալիայի ու Ֆրանսիայի պարագաներում,
- երկրորդ՝ զեկույցն ընդունում է, որ ռուսական էներգետիկ քաղաքականության հակադրմանը միտված Արևմտյան (թեև հեղինակն իրականում նկատի ունի ԱՄՆ-ին ու նրա դաշնակիցներին) քայլերը ոչ միայն արդյունավետ չեին, այլև *ներկայում* գոյություն չունի այդ քաղաքականության դեմն առնող գործուն մի մեխանիզմ ու ամենակարևորը՝ հարցի առնչությամբ անդրատլանտյան միջավայրում չկա սկզբունքային փոխհամաձայնություն:

Որպես *առաջարկություններ* ԱՄՆ քաղաքականության համար՝ զեկույցն առանձնացնում է հիմնականում հետևյալ կետերը.

- նպաստել, որ Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության նկատմամբ Եվրոպայում ձևավորվի համաեվրոպական կամ ավելի ճիշտ՝ Եվրամիության միասնական էներգետիկ քաղաքականությունը, և այդ նպատակով առաջարկվում է կիրառել «Եվրոպական էներգետիկ խարտիայի» («Energy Charter Treaty») դրույթները և ստեղծել համաեվրոպական փոխկապակցված էներգետիկ շուկա, ինչը պետք է վերջ տա առանձին եվրոպական երկրների կախվածությունը Մոսկվայից,

- նպաստել, որպեսզի առաջին հերթին հետխորհրդային (Ուկրաինա, Մոլդովա) ու Արևելյան Եվրոպայի երկրների էներգետիկ շուկաներում, ենթակառուցվածքներում մուտք գործեն «Արևմտյան ներդրողները» (պարզ է, որ հեղինակն առաջին հերթին նկատի ունի ԱՄՆ ու նրա դաշնակիցների ընկերությունները):

Հետևություններ

Հաշվի առնելով նաև «*The Nixon Center*»-ի հրապարակած վերոհիշյալ զեկույցը՝ կարելի է ասել, որ ԱՄՆ փորձագիտական շրջանակները կամ առնվազն դրանց մի զգալի մասն այն կարծիքին են, թե ռուս-եվրոպական էներգետիկ պայմանավորվածությունները ռազմավարական կարգի փոփոխությունների պատճառ են հանդիսանում Եվրոպայում: Պատահական չէ, որ երկու զեկույցներն էլ էական են համարում ինստիտուցիոնալ՝ անդրատլանտյան կամ համաեվրոպական մակարդակի հակաքայլերի ձևավորումը Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության նկատմամբ: Վաշինգտոնում գնահատում են, որ էներգետիկ ոլորտում Մոսկվայի առանձին պայմանավորվածությունները եվրոպական ազդեցիկ պետությունների հետ ոչ այնքան լուրջ հարված են հասցնում ՆԱՏՕ կամ առավել ևս ԵՄ միասնությանը, այլ թուլացնելով այդ միասնությունը՝ Մոսկվան հասնում է Եվրոպայում ԱՄՆ ազդեցության կրճատմանը, քանի որ ՆԱՏՕ ու մասամբ ԵՄ շրջանակներում Վաշինգտոնի ու եվրոպական մայրաքաղաքների համագործակցությունը Հին աշխարհում ամերիկյան ազդեցության կարևոր գրավականներից է:

Երկրորդ, չի կարող ուշադրություն չգրավել այն հանգամանքը, որ չնայած թե՛ «*The Nixon Center*»-ի, թե՛ «*CSIS*»-ի զեկույցներն ընդունում են, որ էներգետիկ հարցերում եվրոպական ազդեցիկ երկրներն առանձին-առանձին են պայմանավորվում Մոսկվայի հետ ու այդ միտումը զգալիորեն խորացել է՝ որոշ դեպքերում հասնելով միջպետական ռազմավարական կարգի փոխհամաձայնությունների, ավելին՝ առաջիկայում դա միայն շարունակվելու է, բայց երկու կենտրոններն էլ պաշտոնական Վաշինգտոնին խորհուրդ են տալիս Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության նկատմամբ հասնել համաեվրոպական կամ առավել ևս՝ անդրատլանտյան պայմանավորվածության կայացմանը: Այլ կերպ ասած՝ «*The Nixon Center*»-ն ու «*CSIS*»-ը առաջարկում են ԱՄՆ պետական քաղաքականությանը գործել մի ուղղությամբ, որը ոչ միայն արդեն այսօր չի աշխատում, այլև որի դինամիկան գոնե ներկայում ԱՄՆ-ի համար ունի բացասական բնույթ: Սա կարող է վկայել, որ այսօր Վաշինգտոնում նույնպես ինդիքների են բախվում՝ ռուսական էներգետիկ քաղաքականության հակազդմանը միտված գործուն մեխանիզմների մշակման առումով:

Սարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ЧЕРНОМОРСКИЕ ПРОЕКТЫ: ТРЕБУЕТСЯ РАВНЫЙ ПОДХОД К ВЗАИМОВЫГОДНОМУ СОТРУДНИЧЕСТВУ

Экономические проекты, связанные с черноморским регионом, получают в последнее время свое развитие, в частности, на энергетическом направлении. Особую активность в сфере генерирования новых идей и их оформления в последовательные планы реализации многосторонних взаимовыгодных энергетических проектов по всему периметру расширенной черноморской зоны проявляет Россия, как крупнейшая держава региона, в особенности по добыче и поставкам энергетических ресурсов на рынки потребления.

Присутствующие в актуальной повестки дня идеи «окольцевания» Черноморского региона двумя проектами – *Черноморское транспортное кольцо* и *Черноморское электроэнергетическое кольцо* – инициированы российской стороной и поддерживаются ею на самом высоком уровне.

Выступая на Балканском энергетическом саммите в Загребе, президент России В.Путин высказался в поддержку реализации проекта «Черноморское электроэнергетическое кольцо»: «Важным является проект синхронизации энергосистем Западной, Центральной и Южной Европы с энергосистемами стран СНГ и Балтии. Его реализация позволит создать Черноморское энергетическое кольцо, которое соединит все европейские страны, расположенные в регионе Черного моря»⁴.

Важность реализации проекта «Черноморское электроэнергетическое кольцо»⁵ (далее – Проект) складывается из нескольких компонентов: 1) Проект даст возможность странам, испытывающим дефицит в энергоресурсах, выйти на систематизированный, урегулированный и институционально оформленный уровень обеспечения своих энергопотребностей в рамках основных параметров общего черноморского энергетического рынка; 2) Проект по определению будет носить расширенный и по географическому, и по энергоформирующему критерию характер. В отношении последнего можно сказать, что Проект будет иметь проецирующее влияние на более широкую сферу энергетического сотрудничества в регионе, он, так или иначе, затронет взаимосвязанные сферы энергопоставок и энергопотребления региона: трубопро-

⁴ Россия обещает решить энергетические проблемы Балкан, <http://www.vesti.ru/doc.html?id=127485>, 24.06.2007.

⁵ Осуществление проекта «Черноморское электроэнергетическое кольцо» является долгосрочным процессом. Главная технологическая задача Проекта – синхронизировать две электроэнергетические системы, отличающиеся по своим эксплуатационно-технологическим характеристикам, в регионе стран ОЧЭС. Одна система объединяет страны ОЧЭС, потребляющие электроэнергию по стандартам, принятым для западноевропейской электроэнергетической системы (система *Union for the Co-ordination of Transmission of Electricity, UCTE*), а другая охватывает страны постсоветского пространства – система *Interconnected Power System/United Power System, IPS/UPS*).

Энергетическая система Турции работает в режимах обоих указанных стандартов, но в энергетической повестке дня страны есть цель по полному вхождению в систему *UCTE*.

Предварительная работа экспертов в рамках Проекта показала, что реализация главной цели Проекта – синхронизация электросетей – требует последовательной этапизации двусторонних подключений к сетям друг друга стран-участниц ОЧЭС. Для подсоединения двух систем друг к другу и их синхронной работы необходимы выработка и согласование технических требований, организационной структуры и эксплуатационных правил, другой нормативной материально-технологической базы. (*John Roberts, Energy Cooperation Among the BSEC Member States. Towards an Energy Strategy for the BSEC // International Centre for Black Sea Studies (ICBSS), Xenophon Paper № 3, October 2007*).

водные магистрали, строительство новых и модернизация существующих тепло- и гидроэлектростанций; создание благоприятного инвестиционного климата и повышение уровня транспарентности в таких вопросах, как прохождение, строительство трубопроводов и связанной с ними инфраструктуры, ценообразование на поставляемые энергоресурсы, дающее поставщикам и конечным потребителям энергоресурсов стабильность в определении их энергетической политики на годы вперед и другое; повышение интегрированности региональных энергетических рынков; налаживание сотрудничества в обеспечении физической безопасности энергообъектов; укрепление природоохранной составляющей энергетики.

Очевидно, что Проект, носящий столь масштабный характер, охватывающий, прежде всего, страны-участницы Организации Черноморского экономического сотрудничества (ОЧЭС), будет нести значительную геополитическую и геоэкономическую нагрузку. Стратегическую идею России, кроме прочего, можно усмотреть в том, что формирование Черноморского электроэнергетического кольца даст ей новые возможности проводить последовательную и учитывающую интересы своих контрагентов по Проекту политику, нейтрализующую планы глобальных внешних акторов на рынке потребления энергоресурсов по задействованию «обходных» России маршрутов энергопоставок, императивной диверсификации каналов поставок, диктуемой, зачастую, вопреки воле непосредственных внешних потребителей российских энергоресурсов.

Россия готова предложить свой «сюжет энергетической диверсификации», привязанный к нуждам непосредственных потребителей энергоресурсов, отражающей специфику и потенциал энергетического пространства черноморского региона и повышающий, в конечном итоге, взаимовыгодность черноморского энергетического многостороннего сотрудничества. Срединное положение Черноморского региона на стыке между европейскими странами-потребителями энергоресурсов и Каспийским бассейном ставит задачу совмещения интересов основных стран-производителей энергоресурсов на европейские рынки. Интересная мысль в этой связи высказана экспертом Центра европейских исследований Средневосточного технического университета в Анкаре Б.Гюльтекин-Пансманн: «Попытки связать Европейский Союз через Черное море с каспийскими ресурсами ведет к признанию важности иранских ресурсов и диверсификации транзитных маршрутов для российского газа»⁶.

Как показал опыт ориентации России, в основном, на двустороннее формирование режимов энергопоставок своим контрагентам в предшествующие годы, это приводит ко многим сложностям, ведущим к дистанцированию некоторых соседних ей стран, считающих себя «обделенными» в энергетическом плане. Многосторонний же подход должен избежать деструктивности другого плана, связанной с политикой «тотальной» скупки энергетических активов своих партнеров, обсуждение которой некоторыми российскими кругами представляется как наиболее правильный курс внешней энергетической политики⁷.

Одним из ключевых акцентов в формировании и развитии Проекта должен стать фактор обеспечения энергетической безопасности стран Черноморского региона, который нуждается в своем концептуальном оформлении. С российской стороны такой акцент был сделан на прошедшем 15-м саммите ОЧЭС в Стамбуле. Выступление президента России В.Путина на сам-

⁶ *Burcu Gültekin-Punsmann*, Black Sea Regional Policy Approach: A Potential Contributor to European Energy Security // International Centre for Black Sea Studies (ICBSS), Policy Brief № 6, May 2008., http://www.icbss.org/index.php?option=com_docman&task=doc_download&gid=501.

⁷ У России есть желание стать хозяином энергоактивов Причерноморья. Азербайджан, Албания, Болгария, Сербия, Украина, Турция и другие страны - члены ОЧЭС в обмен на свои распределительные сети получают гарантированные поставки нефти, газа и, возможно, электричества. Идея продавать электричество не только в Китай (который является главным покупателем у «Интер РАО ЕЭС»), но и в Южную Европу лоббируется Россией уже давно. Но технически она будет осуществима лишь при согласии всех стран будущего Черноморского энергокольца объединить свои энергосистемы с российской. (*Владимир Путин осадил Константинополь*, «Газета» № 113, 26.06.2007, <http://gzt.ru/business/2007/06/25/220023.html>).

мите затронуло вопрос создания Черноморского энергетического кольца, которое стало бы одним из факторов энергобезопасности стран-участниц ОЧЭС.

Развитию взаимовыгодного энергетического сотрудничества в Черноморском регионе мешают нерешенные этнополитические конфликты. Особую активность на многосторонней «черноморской площадке» отстаивания своих дипломатических интересов проявляет один из членов ОЧЭС Азербайджан по отношению к другому члену Организации – Армении. Последним по времени примером деструктивной позиции Азербайджана, блокирующей все каналы возможного выхода двух конфликтующих стран на взаимовыгодное, пусть даже и опосредованное, сотрудничество в расширенных и диверсифицированных рамках черноморско-каспийского региона, нашел свое выражение во время подписания 9 апреля 2008г. Совместной декларации стран-участниц ОЧЭС о сотрудничестве с Европейским Союзом в области энергетики.

Документ был подписан по итогам встречи министров энергетики стран-членов ОЧЭС и заседания Рабочей группы ОЧЭС по энергетике, которые прошли в Киеве 7-9 апреля 2008г.

Согласно документу, стороны договорились изучить возможность начала координации процесса по гармонизации законодательной базы в сфере энергетики между странами-членами ОЧЭС и ЕС, а также рассмотреть возможность разработки объединенного плана действий ОЧЭС-ЕС в энергосфере. Стороны также выразили намерение развивать практическое и целенаправленное сотрудничество с Европейской Комиссией с целью повышения синергетического эффекта в реализации региональных инициатив ОЧЭС и ЕС в сфере энергетики. В декларации также отмечается необходимость ускорить создание сборника национальных энергетических стратегий членов ОЧЭС и рассмотреть возможность разработки единой региональной энергетической стратегии организации. Кроме того, стороны договорились предложить ЕС присоединиться к целям ОЧЭС в области обеспечения энергетической безопасности в регионе и др.

Представитель Азербайджана, выразив мнение своей страны в отношении негативного влияния затянувшихся конфликтов на региональное сотрудничество и необходимости скорейшего решения этих конфликтов в соответствии с принципами суверенности и территориальной целостности государств, сделал письменное заявление к тексту Декларации: «Республика Азербайджан заявляет, что ни одно из положений этой Декларации для нее в отношении Республики Армении не будет принято, так как в данный момент территории Азербайджана находятся под оккупацией Армении. Азербайджан ни в какой сфере не будет сотрудничать с Арменией до освобождения указанных территорий».

В связи с этим стоит отметить, что 15 апреля 1998г. в Ереване был подписан Меморандум о сотрудничестве стран-участниц ОЧЭС в сфере электроэнергетической промышленности. Под Меморандумом стоит подпись Азербайджана, и никакими заявлениями тогда свою позицию Азербайджан не оговаривал.

Михаил Агаджанян

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ ԿԻԵՎՈՒՄ

Մայիսի 22-23-ը Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում էին հավաքվել, այսպես կոչված, Կասպյան-սևծովյան և բալթյան էներգետիկ տարանցմամբ զբաղվող երկրները, որոնք արդեն երրորդ անգամ են փորձում միավորվել և իրենց երկրներով էներգետիկ ռեսուրսների փոխանցումների կարգավորման ընդհանուր քաղաքականություն մշակել: Մա՛ պաշտոնապես, իսկ իրականում հավաքի նշված ձևաչափը, ըստ ռուս շատ վերլուծաբանների, հակառուսական էր, քանի որ այս երկրներից շատերի տարածքով են դեպի Արևմուտք հոսում հենց ռուսական էներգակիրները՝ գազը և նավթը: Նշենք, որ պաշտոնական Մոսկվայի վերջին տարիների քաղաքականության արդյունքում այս երկրներից շատերը կարող են մեծ գումարներ կորցնել և զրկվել Ռուսաստանի վրա «խողովակային» ճնշում գործադրելու հնարավորությունից: Հիշեցնենք, որ Ուկրաինայի մայրաքաղաքում էին հավաքվել Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Լեհաստանի, Ադրբեջանի, Վրաստանի նախագահները, ներկայացուցիչներ կային նաև ԱՄՆ-ից, Ղազախստանից, նաև Թուրքմենստանից: Հասկանալի է, որ գազաթափոցովը տեղի էր ունենում Եվրամիության հովանու ներքո, որը նույնպես շահագրգռված է թուլացնել կախվածությունը ռուսական էներգակիրներից: Եվրամիության էներգետիկ հարցերով հանձնակատար Անդրիս Պիեբալգսը գազաթափոցովի ընթացքում հայտարարեց, թե «չի կարելի թույլ տալ, որ նա (Ռուսաստանը) մտածի, որ ինքը մոնոպոլիստ է»⁸: Նկատենք, որ այս հավաքն անցած տարի Վիլնյուսում, իսկ այս տարի Կրակովում տեղի ունեցած հավաքների շարունակությունն է, որի նպատակն է նաև պաշտոնական Կիևի ու Վարշավայի կողմից հովանավորվող Օդեսա-Բրոդի-Պլոցկ-Գդանսկ նավթամուղի շինարարության ծրագրի հաստատումը: Հիշեցնենք, որ այս նախագծով (այն գնահատվում է մոտ 1.3 մլրդ դոլար) նախատեսվում է իրար կապել Սև և Բալթիկ ծովերը: Եվ Ուկրաինան ու Լեհաստանը հույս ունեն դեպի այս խողովակաշարն ուղղել Կասպից ծովի ավազանից և Կենտրոնական Ասիայից հոսող նավթը: Չնայած Եվրամիության, Ուկրաինայի և Լեհաստանի ակտիվ լոբբինգին՝ նավթամուղի շինարարությունը տեղից չի շարժվում, և ամենկարևորը՝ պարզ չէ, թե ինչ նավթ է հոսելու այս խողովակաշարով: Ահա հենց այս հարցի պատասխանն է, որ պետք է տրվեր Կիևում: Բացի այդ, մերձբալթյան երկրները ցանկանում են էներգետիկ փոխադրումների ընդհանուր քաղաքականություն մշակել: Գաղտնիք չէ, որ Ռուսաստանից դեպի Եվրոպա ուղղվող նավթի և գազի խողովակաշարերն անցնում են հենց այս երկրներով, ինչը նրանց հսկայական եկամուտներ էր բերում: Մակայն Կրեմլի քաղաքականության փոփոխությունը, մասնավորապես՝ «Հյուսիսային հոսք» և «Հարավային հոսք» կոչվող գազամուղների կառուցումը, ինչպես նաև Բալթիկ ծովի ռուսական ափին նոր տերմինալների շահագործումն էականորեն կրաճատել է, իսկ հետագայում՝ էլ ավելի կկրճատի այս երկրների եկամուտները ռուսական էներգակիրների տարանցումից:

Հենց այս խնդիրներն են միմյանց մոտեցնում այս երկրներին, և կարող ենք ասել, որ չնայած էներգետիկ կոչվող գազաթափոցովին՝ իրականում Կիևում տեղի ունեցավ քաղաքական հավաք, որտեղ, փաստորեն, փորձ է արվում մշակել ընդդեմ Ռուսաստանի նոր քաղաքականություն: Ռուս հայտնի քաղաքագետ Մոդեստ Կոլերովի կարծիքով, որոշ երկրների՝ Ադրբեջանի, Թուրքմենստանի և Ղազախստանի համար այս հավաքի նպատակը սեփական քաղաքական նշանակությունը կարևորելն է, այն դեպքում, երբ տնտեսական կարևորությունը

⁸ ИА REGNUM «Новости», *Еврокомиссар по энергетике: Россия - не монополист, и ей на это указали.* www.regnum.ru/news/1009787.html 03.06.2008

շատ կասկածելի է: «Ղազախստանի տնտեսական դժվարությունները, Ադրբեջանում նավթի պաշարների արդյունահանման կանխատեսելի նվազումը և Թուրքմենստանի էներգետիկ պաշարների կասկածելի գնահատականները վերջիններիս ստիպում են երկխոսություն սկսել «ժողովրդավարական» ռեսուրս ունեցող սնանկ երկրների հետ», ասում է Կոլերովը⁹: Ըստ նրա՝ առանց կենտրոնաասիական նավթի, այսպես կոչված, կասպյան-սևծովյան-բալթյան տարանցումն անհիմաստ գործընթաց է, որն ապագա չունի: Ըստ մեկ այլ ռուս քաղաքագետի՝ Դմիտրի Վիդրիևի, դժվար է էներգետիկ անվանել մի գազաթաժողով, որին չեն մասնակցել էներգետիկ ռեսուրսներ ունեցող «մատակարար» երկրներ¹⁰:

Սկստենք, որ էներգետիկ ռեսուրսներ ունեցող մեկ երկիր՝ Ադրբեջանը, այնուամենայնիվ, մասնակցել է գազաթաժողովին, սակայն ասել, թե դա լուրջ կշիռ է տալիս այս հավաքին՝ դժվար է: Մինևույն ժամանակ, նկատենք, որ Ուկրաինան հույս ունի, այնուամենայնիվ, համոզել Իլիամ Ալիևին, որ վերջինս Օդեսա-Բրոդի կոչվող խողովակաշար ուղղի որոշակի քանակությամբ նավթ: Սակայն դա հնարավոր կլինի միայն ի հաշիվ Բաքու-Ջեյհանի, ինչից կտուժի ոչ միայն Թուրքիան, այլ նաև Իսրայելը, որը ժամանակին ակտիվորեն զբաղվում էր այս նախագծի լոբբինգով, իսկ այժմ Ջեյհանից դուրս եկող նավթի հիմնական սպառողներից մեկն է:

Կիևյան էներգետիկ գազաթաժողովի հիմնական արդյունքն այն էր, որ կնքվեց, այսպես կոչված, գլոբալ էներգետիկ անվտանգության սկզբունքների մասին կիևյան հռչակագիրը: Ըստ որոշ մասնագետների՝ սա, փաստորեն, Եվրամիության էներգետիկ խարտիայի կրկնությունն է: Գաղտնիք չէ, որ այդ խարտիան, իր հերթին, ստեղծվել է, որպեսզի ռուսական էներգետիկ քաղաքականության դեմ միասնական հայեցակարգ մշակվի: Այսինքն՝ իր ձևի մեջ սա ընդգծված հակառուսական փաստաթուղթ է, որն իր հերթին ստացավ Ուկրաինայի, Ադրբեջանի, Վրաստանի աջակցությունը: Էներգետիկ գազաթաժողովը դադարեց այդպիսին լինելուց և, փաստորեն, վերածվեց քաղաքական հավաքի, և ընդունված որոշումներն էլ ընդգծված քաղաքական են: Ինչ վերաբերում է Ուկրաինայի ներկա ղեկավարության համար ռազմավարական նշանակություն ունեցող Օդեսա-Բրոդի-Պլոցկ-Գդանսկ նավթամուղին, ապա այդ հարցով ընդամենը ընդունվեց համատեղ հայտարարություն այն մասին, որ ստեղծվում է այս նախագծի տեխնիկատնտեսական հետազոտման աշխատանքային խումբ: Սակայն նավթամուղի հնարավոր ավարտման և այն նավթով ապահովելու մասին կոնկրետ ոչ մի պայմանագիր գազաթաժողովի ընթացքում չկնքվեց: Այսպիսով, կարող ենք փաստել, որ ընդգծված քաղաքական որոշումներով կիևյան հավաքի մասնակիցները ցանկանում են ճնշում գործադրել Ռուսաստանի վրա, ինչի համար նրանց պետք է միասնական քաղաքականություն մշակել: Ինչպես նշեցինք, պաշտոնական Մոսկվան կրճատում է էներգակիրների տարհանումը նշված երկրներից, մասնավորապես՝ արդեն այս տարվանից համարյա ամբողջովին դադարեցվել է նավթի առաքումը լատվիական Վենտսպիլս նավահանգիստ: Այս նավահանգստը երկրի բյուջեին նախկինում տարեկան 400 մլն դոլար գումար էր բերում¹¹: Ռուսաստանը մերձբալթային երկրներից սիստեմատիկորեն կրճատում է նավթի առաքման ծավալները: Մասնավորապես, Էստոնիան տարեկան 80 մլն դոլար գումար է ապահովում ռուսական էներգակիրների տարանցումից: Ռուսական նավթի առաքումը դադարեցվել է նաև Լիտվայի Մաժեյկայի նավթավերամշակման գործարանին: Նշենք, որ արդեն 2010-ից Մոսկվան սկսում է ավելացնել նավթի արտահանումը ոչ միայն Բալթիկ ծովի ռուսական ափից, այլ նաև կառուցելու է նոր նավթամուղ դեպի Մուրմանսկ և Արխանգելսկ նավահանգիստներ, ինչը նրան

⁹ ИА REGNUM «Новости», *Декларации энергетического саммита в Киеве - вопль отчаяния неэффективных союзников Запада: Модест Колеров*, www.regnum.ru/news/1005164.html 25.05.2008

¹⁰ ИА REGNUM «Новости», *Политолог: Энергетический саммит в Киеве, прошедший без "поставщиков", сложно назвать полноценным*. www.regnum.ru/news/1005996.html 27.05.2008

¹¹ ИА REGNUM «Новости», *Ашот Егиазарян: Энергетическое НАТО и бунт транзитеров в Киеве*, www.regnum.ru/news/1006563.html 28.05.2008

հնարավորություն կտա դադարեցնել նավթի առաքումը մերձբալթյան հանրապետությունների նավահանգիստներից և նույնիսկ կրճատել առաքումը Դրուժբա նավթամուղով, այսինքն՝ Ուկրաինայի և Լեհաստանի տարածքով:

Կարող ենք ասել, որ Ռուսաստանի գործնական քայլերին նրա հարևան երկրները փորձում են քաղաքական պատասխան տալ՝ ստեղծելով տարբեր տրամաչափի «Էներգետիկ» միություններ, որոնց հակառուսականությունը բացատրվում է նրանց ցանկությամբ՝ ունենալ Ռուսաստանի էներգակիրների տարանցման հնարավորությունը որպես տնտեսական միջոց, որը միլիոնավոր դոլարների եկամուտ է բերում, և այն օգտագործել նաև որպես քաղաքական ճնշման գործիք Մոսկվայի նկատմամբ ինչ-որ դիվիդենտներ ձեռք բերելու ակնկալիքով:

Արևելաեվրոպական երկրների նման երկակի խաղը, հասկանալի է, արժանանում է Բրյուսելի և Վաշինգտոնի հավանությանը: Կարող ենք փաստել, որ այնուամենայնիվ, այս խաղում՝ Ռուսաստանն ընդդեմ նոր էներգետիկ դաշինքի, Մոսկվան ամուր դիրքեր ունի:

Արմեն Մանվելյան

ԱԾՈՒԽ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՌՈՒՄԸ Վիճակագրական վերլուծություն

Ածխարտադրության զարգացման դինամիկան. համաշխարհային և տարածաշրջանային տվյալներ

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ածխի համաշխարհային արտադրության դինամիկան վերջին 25 տարիներին աճել է 92%-ով: Եթե 1996թ. ածխի համաշխարհային արտադրությունը կազմում էր 3,734 մլն տոննա, ապա 2005թ. այդ ցուցանիշը 4,934 մլն տոննա էր: 2006թ. տվյալներով, նախորդ տարվա համեմատությամբ, ածխի համաշխարհային արտադրությունն աճել է 8,8%-ով՝ հասնելով 5,370 մլն տոննայի:

Միջազգային էներգետիկ վիճակագրության համաձայն, 1986-2006թթ. ածխի համաշխարհային սպառման դինամիկան, ըստ տարածաշրջանների աստիճանակարգման, կայուն աճման միտում է ունեցել միայն ասիական/խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում (ինչը պայմանավորված է հիմնականում Չինաստանի գործոնով), որի արձանագրած ցուցանիշը նշված ժամանակահատվածում, որպես կանոն, գերազանցել է մյուս տարածաշրջանների քանակական արդյունքները: Սույն ժամանակագրական բաժանման համաձայն, Եվրոպայում և նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում ածխի սպառման դինամիկան կայուն նվազման միտում է արձանագրել, իսկ Հյուսիսային Ամերիկայի պարագայում՝ 1986թ. համեմատ ընդամենը 2% աճ, իսկ 2006թ. դրությամբ՝ 1986թ. համադրությամբ 3% նվազում (տե՛ս *Աղյուսակ 1, Գրաֆիկ 1*):

Աղյուսակ 1

Ածխի համաշխարհային սպառման դինամիկան 1986-2006թթ.՝ ըստ տարածաշրջանների, %-ով

Տարածաշրջան	1986	1996	2006
Եվրոպա	17%	11%	7%
Նախկին ԽՍՀՄ	17%	8%	6%
Հյուսիսային Ամերիկա	21%	23%	18%
Ասիա/խաղաղօվկիանոսյան	39%	53%	65%
Համաշխարհային	3232 մլն տ	3773 մլն տ	5339 մլն տ

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 1973թ. տվյալներով համաշխարհային ածխարտադրության ուղիղ կեսը բաժին էր ընկնում ՏՀԶԿ անդամ երկրներին (տե՛ս ծանոթագրությունը), որի 2006թ. ցուցանիշը կտրուկ նվազել է մինչև 28.1%-ի: Պետք է նկատել, որ համաշխարհային ածխարտադրությունում ՏՀԶԿ անդամ երկրների ցուցանիշի անկումը պայմանավորված է հիմնականում ոլորտում Չինաստանի ցուցանիշի աճով: Այսպես, եթե 1973թ. համաշխարհային ածխարտադրությունում Չինաստանի մասնաբաժինը կազմում էր 18.7%, ապա 2006թ.՝ 46.2% (գրեթե կեսը): Ածխարտադրության տարածաշրջանային աստիճանակարգման ցուցանիշներին կարող էք ծանոթանալ *Գրաֆիկ 2, 3-ում*:

Ներկայում ածխարտադրության աճի տեմպերի հարցում զգալի է նախնառաջ չինական գործոնի դերը, որը կներկայացվի նաև թվային վիճակագրության տեսքով: 2006թ. Չինաստանն արտադրել է շուրջ 1,956 մլն տոննա ածուխ (ինչը կազմում է նույն թվականին համաշխարհային ածխարտադրության շուրջ 36%-ը)՝ գլխավորելով ածխարտադրող երկրների աստիճանակարգը: Չինաստանին հաջորդում են Միացյալ Նահանգները (համաշխարհային ածխար-

տաղրության 18.5%-ը, Հնդկաստանը՝ 7.4%-ը, Ավստրալիան ու Ռուսաստանը՝ համապատասխանաբար 6.7 և 5.1%-ը): ԱՊՀ երկրներից ցուցակում ընդգրկված են նաև Ղազախստանն ու Ուկրաինան, որոնք 2006թ. արտադրել են համապատասխանաբար 86,8 և 80,6 մլն տոննա: Թուրքիայի մասնաբաժինը կազմել է համաշխարհային ածխարտադրության 0.8%-ը (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ածխի արտադրությունն ըստ երկրների, 2006թ.

դիրք	երկիր	ածխի արտադրություն, մլն տոննա
1.	Չինաստան	1,956
2.	ԱՄՆ	1,008.3
3.	Հնդկաստան	403
4.	Ավստրալիա	364,5
5.	Ռուսաստան	280
6.	Հար. Աֆրիկա	242,8
7.	Գերմանիա	207,7
8.	Լեհաստան	161,2
9.	Ինդոնեզիա	132,4
10.	Ղազախստան	86,8
11.	Ուկրաինա	80,6
12.	Հունաստան	70,8
13.	Կանադա	66
14.	Չեխիա	61,8
15.	Կոլումբիա	55
16.	Թուրքիա	48
17.	Ռումինիա	35
18.	Վիետնամ	26,4
19.	Բուլղարիա	26,2
20.	Մեծ Բրիտանիա	25,1
21.	Իսպանիա	20,5
22.	Թաիլանդ	20,2
23.	Հունգարիա	14
24.	Վենեսուելա	9
25.	Մեքսիկա	9
26.	Նոր Զելանդիա	5
27.	Բրազիլիա	4,4
28.	Զիմբաբվե	3,3
29.	Հարավային Կորեա	3,2
30.	Պակիստան	3
31.	Ճապոնիա	1,3
32.	Ֆրանսիա	0,9
Համաշխարհային		5,428

Աղբյուրը՝ http://www.nationmaster.com/graph/ene_coa_pro-energy-coal-production

Ածխարտադրությունը՝ որպես էներգետիկ սեկտոր

Ածխարտադրության սեկտորը զգալի տեղ է զբաղեցնում համաշխարհային էներգաարտադրությունում: Միջազգային էներգետիկ կազմակերպությունների գնահատականների համաձայն, համաշխարհային էներգաարտադրության մի զգալի հատվածը՝ շուրջ 25-26%-ը, բաժին է ընկնում ածխարտադրության սեկտորին (տե՛ս *Գրաֆիկ 4*): Համաշխարհային էներգետիկայի սպառման մեջ ածխարտադրության սեկտորը զիջում է միայն նավթին, որ,ն ինչպես նշված է գրաֆիկում, կազմում է համաշխարհային էներգաարտադրության 35%-ը:

**Ածխի մասնաբաժինը համաշխարհային էներգիայի արտադրությունում,
առանձին երկրների օրինակով**

Ածխարտադրության սեկտորը ներկայացնում է համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության զգալի հատվածը՝ կազմելով վերջինիս 40%-ը (տե՛ս *Գրաֆիկ 5*): Նշենք նաև, որ համեմատաբար բարձր են գազի (20%) ու հիդրոէներգետիկ (16%) սեկտորների ցուցանիշները, որոնց հանրագումարը համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության համատեքստում չի գերազանցում ածխի մասնաբաժինը:

